

3054

266  
U-76

1908

Or. A. N. S. 30

№ 9

АМ-809

и/з

ԱՍՏՈՒԱԾ

ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Ե

„ԲԱՐԵԼՈՒՐԻ“

ՀՅԵՍՔԸՆԿՐԻԹԻՒՆ



ԳԻՒՆ Ի, Յ ԿՈՊ.

Богъ предостерегаетъ

ԲԱԴՈՒ

Տպար. Ա. Մ. Թափայեանցի և Լ. Ֆ. Միրզակեանցի

1908

Տիպ. А. Н. Тараева и Л. Д. Мирзаянцъ  
Баку.

266  
Ա-76

42001

2010

ՀԱՐՄ  
2-5524 շ

ՁԿ-804

266

Ա-76

## ԱՍՏՈՒԱԾ ԶԳՈՒՋԱՑՆՈՒՄ է

(Երկնի վերաբերեալ մի երազ):

Երազում նա բանում է մարդկանց տկանջը: (Յոթ լր, 15):

Տարիներ առաջ Լ. — քաղաքում ապրում էին բարձր դասակարգի պատկանող երեք քոյրեր: Սրմացից երկուսը դարձել էին Աստուծուն իսկ երրորդը աշխարհասէր էր և Աստուծանից հեռու:

Մի ձմերային գիշեր անդարձ քոյրը եղել էր պարահանդէսումն և ուշ տուն վերադարձել: Հետևեալ առաւօտը նախաճաշին նա շատ տխուր էր: Նա որ ուրիշ ժամանակ շատ սիրում էր խօսելը, այժմ նստել էր լուռ ու մունջ. յայտնի երեսում էր, որ նա խորասուզված էր տխուր մտածմունքների մէջ:

Նա մինչև անգամ ոչինչ չէր ուտում: Քոյրերը այդ նկատելով հարցրին, թէ ինչ է պատահել. հիւանդ խօմ չէր: Նա պատասխանեց թէ «ոչ»: «Ապա ինչու ես այդպէս տխուր»: «Ոչինչ»: Նրանք աւելի անհանգստացան և սկսեցին ստիպողաբար հարցնել: Բայց նա պատաս-

4954-ան.



29363-63

խանում էր. «Զեմ հասկանում թէ դուք ինչու համար էք այդպէս ստիպում ինձ»:

Մինչև կէսօր նա մնաց իր սենեակում մենակ ու փակված. ճաշի ժամանակ էլ՝ առաւօ. տեան պէս, մինոյն տրամադրութեան մէջ էր գտնվում նա: Շատ քիչ էր ուտում, ոչինչ չէր խօսում, միայն երբոր հարցեր էին տալիս իրան՝ պատասխանում էր կարճ և ակամայից:

Նա ուշ գնաց քնելու և նրա դէմքից պարզ երեսում էր, որ նա ոչ մի թեթեսութիւն չէր ըստ պատասխան քնից: Հետեւեալ առաւօտ նոյնպէս հազիւ թէ ձեռ տվաւ. իր առջեր դրած կերակուրին: Այդ օրն էլ նախընթաց օրվայ պէս տխուր և անմիջաբար էր նա: Քոյրերից մէկը հարցրեց. «Աննա, կարելի է գլխացաւ ունիս»: «Ո՛չ», պատասխանեց նա. «Լաւ եմ և ոչ մի ցաւ չ'ունիմ»: «Ուրեմն արախդ մէջ մի բան ունիս, որ չես կամենում մեզ ասել: Միթէ մենք քեզ չենք սիրում. միթէ մենք իրաւունք չունենք քո վըշտիդ մամնակից լինելու»: «Ա՛խ, դուք կարիք չունիք նոր պատմութիւններ լսելու ինձանից. դուք առանց այդ էլ արդէն նախապաշարված էք ինձ դէմ: Ո՛չ, ոչ, ես ձեզ ոչինչ չեմ պատմիլ, իգուր տեղը մի տանչէք ինձ ձեր հետաքրքրութիւնով: Կասկած չկայ, որ դուք պիտի զմայլէք, եթէ հիմա իմ ամբողջ պատմութիւնը իմանաք և դուք այդ

մի մեծ յաղթութիւն պիտի համարէիք: Բայց ես այդ բոլորի վրա էլ ծիծաղում եմ, ես դեռ այնքան չեմ պառաւել, որ տեսիլներով ու երազներով զբաղվեմ»: «Բայց Աննա, դու պէտք է իմանաս, որ մենք ևս չենք տպրում տեսիլներով ու երազներով»: «Լաւ, իմ ուզածն էլ հէնց այդ է», պատասխանեց նա սուր կերպով: Քոյրերը նայեցին իրար և լուռ կեցան: Իսկ Աննան մնաց տխուր և տրտում: Քոյրերը անհանգիստ էին և շատ ցաւում էին նրա համար:

Երրորդ առաւօտը Աննան այնպէս էր յուզված երեսում, որ կարծես թէ ատում էր ցերեկվայ լոյսը՝ գրեթէ լրված, կեանքից ձանձրացած: Յանկարծ քոյրերից մէկը ասեց. «Աննա, այս գիշեր ինչ երազ ես տեսել»: Վերջինս մընաց ապշած և սկսեց հեգնօրէն ծիծաղել: «Ի՞նչ երազ, ինչ բան: Հաւատացած եմ որ դուք ամբողջ աշխարհը կը տայիք, եթէ միայն իմանայիք.... բայց միամիտ եղէք, չեմ ասիլ: Միևնոյն է, դուք չեք հաւատում երազների և տեսիլների»: «Ճիշտ է, մենք առհասարակ չենք հաւատում երազների. բայց կան երազներ, որ Աստուածանից են: Աստուածաշունչի մէջ մի համար կայ, որ ասում է. «Երազում նա բանում է մարդկանց ականջը»: (Յոր լգ, 15): Նա դարձեալ ծիծաղեց ու ասաց. «Դուք միշտ համար-

Ներ էլ ունիք Աստուածաշունչի մէջ ամեն բանի համար։ Կարելի է, այդ տեսակ բաները ձեր բանին գան. սակայն ես հաստատ գիտեմ, որ այս բանն էլ մի քանի օրում գլխից գուրս կը վռնգեմ»։ «Աննա, Աննա, խնդրում ենք պատմիր այդ երազը; Եթէ տեսած երազդ երկնքի մասին է, ինարկէ շուտով մոռացութեան չես տալ. իսկ եթէ մի անիմաստ երազ է, այն ժամանակ պատմիր, որ մենք էլ քեզ հետ ծիծաղենք»։ Աննան հազիւ լսելի ձայնով ասեց. «Եթէ անպատճառ ցանկանում էք իմանալ, լսեցէք; Իսկ որ մի զարմանալի երազ է այս. Գուցէ զա պարանդէսի ազգեցութիւնից առաջ եկած մի արդիւնք է. բայց երբէք այդպէս բան ես տեսած չը կամ։ Սակայն մի կարծէք, որ իմ ամբողջ պատմութիւնս պիտի կարողանաք հասկանալ։ Դէհ, հիմա լսեցէք

### Երազը:

«Իսձ թւում էր, որ ես ման էի գալիս մի մեծ քաղաքի լայն փողոցներով. Շատ մարդիկ անցնում էին իմ կողքից դէս ու դէն. Այդ անցորդների վրա կար մի բան, որ իսկոյն աչքի էր ընկնում. Նրանք խոր մտածութեան մէջ էին, բայց ուրախ. Նրանց մտածմունքը չէր պատռում զուարձութիւնների շուրջը. այլ նրանց դէմքերի վրա նկատելի էին այնպիսի մի հան-

պատռւթիւն, այնպիսի մի ազնւութիւն, խաղաղութիւն և մաքրութիւն, որ երբէք չի կարելի նկատել մի մահկանացուի դէմքի վրա։ Այդ քաղաքի լուսաւորութիւնը զարմանալի էր։ Արեգակի լուսաւորութեան պէս չէր, որովհետեւ աչք չէր շացնում և ոչ էլ լուսինի, որովհետեւ կէսօրվայ փայլունութեան պէս էր այդ—մեղմ, հաճելի և յաւիտենական մի փայլունութիւն։ Շինութիւնները մի մի պալատներ էին, բայց ոչ թէ երկրի վրայի պալատներ։ Գետինը, որի վրա ման էի գալիս, և տները—բոլորը ոսկիի պէս փայլուն, լուսաւոր և ապակիի պէս թափանցիկ էին։ Լայն և մաքուր լուսամուտները նման էին կիսաշրջան աղեղների։ Այս բոլորը տեսնելով ես ինքս ինձ ասում էի. այստեղ է ամեն փափազների կատարումն ու լրումը. ահա այստեղ է երանելիների նաւահանգիստը։ Ես այնտեղ ման գալիս՝ միշտ նորից ու նորից բացականչում էի և ասում. «Իրաւի սա է մաքրութեան, ճշմարտութեան և խաղաղութեան բնակավայրը»։

«Մի խօսքով՝ այնտեղ ամեն ինչ գեղեցիկ, փայլուն և կատարեալ էր։ Ես ինքս ինձ բացատրել չէի կարողանում, թէ ինչու պէտք է այնտեղ մնալու փափակ չունենայի։ Ես այդ պայծառութեան մէջ ինձ զգում էի ճնշված ու նեղված։ Ես այնտեղ չէի գտնում ինձ յարմար

մի բան, թէև այն բազմաթիւ երջանիկ մարդկանց երեսների վրա փայլում էր միայն սէր ու քաղցրութիւն։ Ես զգում էի, որ ես ոչ մի կապ չունեմ իմ շուրջը եղած բաների հետ և հետեւաբար ինձ մենակ էի զգում այդ երջանիկ խումբի մէջ։ Այդաեղ ման էի գալիս ես բոլորովին մենակ, տիսուր և օտար։ Տեսնելով որ նրանք ամենքը միևնոյն ուղղութեամբ էին գնում, ես էլ հետաքրքրվեցայ և գնացի նրանց ետևից, մինչև որ նրանք կանգ առին մի շինութեան առջե, որը միւսներից շատ աւելի գեղեցիկ և մեծ էր։ Ես տեսայ թէ ինչպէս նրանք լայն աստիճաններով բարձրացան վեր և լայն բացված դններով ներս մտան։ Ես ոչ մի փափառ չէի զգում իմ մէջ, նրանց հետ միասին ներս մտնել, բայց հետաքրքրութիւնից շարժված գնացի մինչեւ աստիճանները։ Ես տեսայ այնտեղ ներս են մտնում ամեն գոյնի մարդիկ և ամեն տեսակ հանդերձներով, երկրի ամեն ազգերից։ Նրանք մտան ներս և մի առ ժամանակ աչքից հեռացան։ Բայց շուտով դարձեալ տեսայ նրանց՝ լուսափայլ և սպիտակ հանդերձներ հագած՝ անցան մի սրահով։ Ո՞հ թէ կարողանայի նկարագրել ձեզ համար այդ սրահը։ Նա ոչ ակնվանիից, ոչ մարմարից և ոչ ոսկիից էր շինված, նա տեղովը մի լոյս էր—պայծառ լոյս, որպէս լուսնեակի լոյ-

սը՝ մեղմ ու զնվ, և որպէս արեգակի լոյալ՝ առանց իր շլաշնող ձառագայթների, ներսում բարձրանում էին դէպի վեր տանող լուսափառ աստիճաններ, որոնց վրայով սպիտակ հագածները արագ-արագ վեր էին բարձրանում։ Թէ և ամեն ինչ այդպէս փայլուն, հարթ և գեղեցիկ էր, բայց ես սարսափում էի, այնպէս որ վախից ետ գառայ։ Այդ միջոցին տեսայ ցածի աստիճանում մէկը կանգնած՝ նայում է ինձ խորին կարեկցութեամբ։ Ես կանգ առայ, որպէս զի տեսնեմ ինչ պիտի առէ ինձ։ Նրա ձայնը մեղմ և ներդաշնակ էր։ Նա հարցրեց. «Ի՞նչու համար ես ետ գառնում, սրանից աւելի լաւ տեղ ո՞րտեղ պիտի գտնես, միթէ դուրսը խաւարի մէջ մի երանութիւն կայ»։ Ես մնացի լուռ կանգնած։ Նա հրաւիրեց, որ հետը ներս գնամ, բայց ոչ պատասխանել կարողացայ և ոչ էլ տեղիցս շարժվել։ Յանկարծ նա աներևոյթացաւ և նրա տեղը մի ուրիշը եկաւ միևնոյն նայվածքով և միևնոյն շարժումներով։ Ես ցանկանում էի հեռանալ նըրանից, բայց կարծես թէ մեխված լինէի այնաել։ Նա ասեց. «Այսքան տեղը եկել ես և էլի չես կամենում այստեղ մնալ։ Հանիր վրայիցդ հանդերձներդ և հագիր սպիտակ հանդերձներ»։ Նա այնքան ստիպեց ինձ մինչեւ որ ես զայրացած պատասխանեցի նրան։ «Ես չեմ կամենում

քեզ հետ ներս գնալ, ինձ հարկաւոր չեն քո  
հանդերձները. իսկ ձեզ շրջապատող այդ սպի-  
տակ փայլը անտանելի է ինձ համար»։ Նա հա-  
ռաչեց և անցաւ ու գնաց. իմ առջեկցս անց-  
նոյներից շատերը նոյնպէս նայում էին ինձ քաղց-  
րութեամբ ու ցաւակցութեամբ, նրանք նոյն-  
պէս համոզում էին որ հետները ներս գնամ, մեկ-  
նում էին իրանց ձեռքները դէպի ինձ, որ ձեռ-  
քից բռնած վեր տանեն ինձ, բայց ես ամենին  
էլ մերժում էի և շարունակ կանգնած էի այն-  
տեղ տիսուր և տրուռմ. Վերջապէս աստիճան-  
ների վերկը կանգնած մի լուսազգեստ երիտա-  
սարդ ցած եկաւ ինձ մօտ և ինդրեց որ ներս  
գնամ. Նրա ձայնի և նրա կերպարանքի մէջ մի  
այնպիսի հեղինակութիւն կար, որ ես չը կարո-  
ղացայ հակառակել. Նա ասում էր. «մի դառնալ  
յետ, ուր ես գնում. Մի ուշանալ, ի՞նչու ես քեզ  
յետ պահում չնշին բանի համար. Ներս եկ և  
վայելիր այս երանութիւնը. Զես տեսնում որ  
ամեն գոյնի և ամեն կարդի մարդիկ մտնում են  
այդ սրահը՝ լուացվում, հագնվում և միմիթար-  
գում»։ Նա ձեռքը տվաւ ինձ և ես գնացի հե-  
տը. Այնտեղ սրսկեցին իմ վրա մաքուր ջուր—  
և մի սպիտակ հանդերձ գցեցին ուսերիս վրա.  
Ես բոլորովին չը գիտէի իմ ինչ անելիքը, բայց  
իմ օրհնեալ առաջնորդը ձեռքիցս բռնած՝ տա-

նում էր ինձ վեր՝ այն փայլուն աստիճաններով:  
Երբ հասայ վեր, ոհ, ինչ լոյս էր սա, որ  
ծագեց ինձ վրա. Ոչ մի մահկանացու չէ կարող  
խօսքերով նկարագրել այդ, կամ մտքով ըմբռ-  
նել. Այն լոյսի ճառագայթները, որոնցով ես շրր-  
ջապատփած էի չէր կարելի համեմատել ոչ ա-  
մենապայծառ շափիւղայի և ոչ էլ փայլուն ասու-  
ղերի հետ. Ուր է կարելի գտնել այսպիսի  
սիրավառ կերպարանքներ՝ ինչպէս իմ շուրջն  
կանգնողներինը. Յաղթահարփած և թշւառ վար  
ընկայ ես, սողալով, սողալով աշխատում էի  
քաշվել մի անկիւն՝ այնտեղ թագնվելու համար,  
որովհետեւ տեսնում և զգում էի որ իմ և իմ  
լուսագեղ շրջապատի միջև ոչ մի համապատաս-  
խան բան չը կայ. Նրանք շարք-շարք կանգնե-  
ցին երաժշտութեան և երգեցողութեան համար:  
Ոչ մի մահկանացուի ականջ չէր լսել երբէք  
այդ տեսակ երգեր ու նուագներ. Իմ ուղեկիցը  
նոյնպէս միացաւնրանց և ես մնացի մենակ. Ես տես-  
նում էի իմ առջեր այդ սրանչելի կերպարանքները  
— ամենքը գեղեցիկ, ամենքը փայլուն, ամենքը  
վերին աստիճանի բաղդաւոր ու երջանիկ. Նրանց  
երգեցողութիւնները, նրանց ուրախ նայւածքնե-  
րը պէս-պէս և զանազանակերպ էին. Վերջապէս  
առաջ մի էակ, որ ամենից աւելի փառաւոր,  
գեղեցիկ, ազնիւ, վէճ և սրանչելի էր. Ամեն աչք

դարձաւ Նրան և ամեն երես սկսեց աւելի ուշ բախութեամբ փայլել։ Այդ երգեցողութիւններն ու փառաբանութիւնները սահմանված էին Նրա գովասանքի համար։ Ամենքը Նրանից էին ստանում կեանք և ուրախութիւն։ Երբ ես այսպէս դողդոջուն և լուռ զմայլման մէջ նայում էի յանկարծ ինձ ըրջապատողներից մէկը դուրս եկաւ շարքերի միջից, մօտեցաւ ինձ և ասեց. «Ի՞նչու համար ես այդպէս լուռ կանգնել. եկ, խառնվիր մեր շարքերին և ձայնակցիր մեր երգեցողութեանը»։ Այդ նկատողութիւնը զայրացրեց ինձ, և ես նեղացած պատասխանեցի. «Ես չեմ կարող ձայնակցել ձեր երգեցողութեանը, որովհետեւ դըրանց եղանակները չը գիտեմ և չեմ էլ կամենում ձեզ հետ զրօննել՝ որովհետեւ դրա կերպը չը գիտեմ»։ Նա հառաչեց և խոր ցաւակցութեամբ ինձ նայելով՝ գնաց դարձեալ իր տեղը։ Մի ըռպէ չ'անցած եկաւ մի ուրիշը ու կրկնեց մի և նոյնը։ Նոյն տհաճութեամբ պատասխանեցի և Նրան։ Ինձ թւում էր, որ նա պատրաստ էր տալ ինձ իր ամբողջ փայն ու գեղեցկութիւնը՝ իմ միտքը փոխելու համար։ Բայց, աւաղ, նա էլ իր նպատակին չը հասած՝ դարձաւ ու գնաց իր տեղը։

Ի՞նչն էր որ այդպէս տհաճութիւնն էր պատճառում իմ սրտիս մէջ։ Ի՞նչ էր պատճառը, որ ես այդ-

պէս ամբողջ մարմնով դողում էի, որ արիւնս սառչում էր երակներումս, իսկ իմ սիրտը շարունակ աւելի խստանում և իմ ձայնը աւելի կերկերում էր։ Այդ փառաւոր հանդէսի Տէրն ու Տիրապետողը խօսեց ներդաշնակ և քաղցրահնչիւն ձայնով. «Ի՞նչու ես դուռ լուռ նստել, մինչդեռ այստեղ ամենքը երջանիկ են, եկ, միացիր նրանց շարքերին, որովհետեւ ես յաղթեցի. արի, ձայնակցիր իմ ժողովրդիս երգեցողութեանը»։ Անպատմելի սէր էր արտափայլում Նրանից իմ վրա—մի այնպիսի սէր, որ կարող էր լինէր քարեղէն սրտեր հալեցնել. բայց ես զգում էի, որ ոչ մի փոփոխութիւն չէր կատարվում իմ մէջը։ Ես շարունակ կրկնում էի միայն. «Ես չեմ կարող ձեր երգին ձայնակցիլ, որովհետեւ դրանց եղանակները չը գիտեմ. չեմ էլ կամենում ձեզ հետ ձեմել, որովհետեւ ձեմելու կերպը չը գիտեմ»։ Նրա երեսը այնպէս փոխվեց, որ ոչինչ չէր կարող Նրա առաջին կանգնել։ Նրա նայվածքը կայծակի պէս էր և նա որոտալից ձայնով ասեց. «Բայց դու այստեղ ի՞նչ գործ ունես»։ Գետինը ուներիս տակ պատառվեցաւ և ես ընկղմեցի բոցերի ու տանջանքների մէջ և ահա այս զարհուրելի սոսկումներից ես զարթնեցի»։

Այս պատճութիւնից յետոյ տիրեց հանդիսաւոր մի լուռութիւն, որովհետեւ քոյլերը սաս-

տիկ յուղված էին Աննայի այդ երազովը:— «Աննա», ասեցին նրանք, «մենք խորհուրդ չենք տալ քեզ, որ դու այդ երազը մոռանաս. որովհետև մենք հաստատ համոզված ենք, որ դա Աստուածանից է: Աստուած դրանով քեզ զգուշացնում է: Այս, քո երազը հրաշալի է: Սուրբ քաղաքի վրայով արած քո նկարագրութիւնը զրեթէ ամբողջովին համաձայն է Աստուծոյ խօսքին. դա գտնվում է Յայտնութեան գրքում (իս, 9—27): Այդ քաղաքը պէտք չունի ոչ արեգակի և ոչ լուսինի, որովհետև Աստուծոյ տաճարը նրանումն է և նրա ձրազը Դառն է: Ամեն այնաեղ մանողները պէտք է առաջ իրանց հանդերձները լուանան և սպիտակացնեն Աստուծոյ Գառի՝ Յիսուսի արիւնով: (Յայտ. ժթ, 8): Ո՞հ, Աննա, դու զիտես ուղիղ ձանապարհը: Թող քո կամակորութիւնը և լսիր այդ լուրջ և զգուշացնող ձայնը: Բոնիր Յիսուս Քրիստոսին, որ իր արիւնը քեզ համար հեղեց, որովհետև դա միայն կարող է բերել քեզ երկնային և յաւիտենական փառքի մէջ: Դու զիտես, որ Նա քեզ սիրում է և ահա քանի տարի է քեզ որոնում է: Ո՞հ, Աննա, Եկ Յիսուսի մօս»: Աննան ձակառը կնճռուաց և պատասխանեց. «Ինձ պէտք չեն ձեր քարոզները. թոյլ տվեք ինձ անել այն, ինչ ինձ հաճելի է»:

Մինչև շաբաթի վերջը Աննան մնաց այդ ցաւալի զրութեան մէջ. և ապա մի առաւօտ գտան նրան իր սենեակումը—մերած:

Ոչ ոք չ'իմացաւ նրա մահվան պատճառը: Նա մեռաւ առանց ֆիզիքական հիւանդութեան, և որ աւելի ցաւալի է առանց մի հոգեոր փոփոխութեան: Արգեօք որտեղ պիտի լինի նա:

Թանկագին ընթեցող, Աստուծ շատ անգամ զգուշացրել է, մեր այս եւ մեր այն կերպով: Արդեօ՞ք իզուր պիտի անցնին Աստուծային բոլոր միջոցները: Ասա, ո՞րտեղ պիտի անցկացնիս դու յախենականուրիւնը, երէ Աստուծ այսօր կամ վաղը կանչի ենց այսեղից: «Այսօր՝ երէ նորա ձայնը լսէք, մի խասացնիք ձեր որտերը»: (Եբր. գ, 7. 8):

Ուստի այսօր արդէն շտապիր Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսի փրկչական բաց բազուկների մէջ: Այս, Քրիստոսի տեղակ իննդրում ենք քեզանից. «Հաւսվիր Աստուծոյ հիւս»: Ասրսափելի է կենդանի Աստուծոյ ձեռքը ընկնելը: Ուրեմն շտապիր, ազատիր անձոր: Հիմա գեռիս բաց է քեզ համար շնորհաց դուռը. վաղը կարող է յախենան ուս լինել: «Ահա նիմա է ընդունելի ժամանակը, ահա նիմա է փրկուրեան օրը»: Դեռևս Յիսուս թէ քեզ և թէ ամենքին

3054

H 2-55242 APM.

կանչում է և ասում. «Ինձ մօս եկէֆ ամենիդ»: «Ով կամ ենում է քող զայ»: «Ինձ մօս եկողին ես դուրս չեմ անիլ»: «Եկէֆ, արդէն ամ ենը պատրաս է»: Բայց մի անգամ էլ պիտի ասի Նա այն մարդկանց, որոնք այս շնորհաց ժամանակում ալհամարհել են Նրա փրկութիւնը. «Հեռացէֆ Ինձանից, ես ձեզ չեմ ճանաչում»:

A circular blue stamp containing the letters "U.S." in a stylized font.

«Ազգային գրադարան»



